

# ՆՐԲՈՒԹԵՂԱՄԲ ՈՒ ԼՐՋՈՒԹԵՂԱՄԲ

*Posted on May 15, 2011 by Keghart*



Category: [Opinions](#)



## Փոխան Խմբագրականի

Պարոյր Աղպաշեան, Պէյրուզ, 16 Մայիս 2011

### Սփիւռքի Հետ Վերաբերուելու Նրբութիւնն Ու Լրջութիւնը

Իրաւացի՞ է, երբ կ'ըսուի թէ՛ Հայաստանը զօրաւոր է Սփիւռքով, իսկ Սփիւռքը՝ Հայաստանով:

Ոմանք՝ հաւատքով, համոզումով, վճռականութեամբ կամ լաւատեսութեամբ, «այո» կը պատասխանեն, ուրիշներ՝ թերահաւատ, կասկածամիտ, վերապահ կամ յոռետես, անշուշտ, իւրաքանչիւրը մեկնելով իր տրամաբանութենէն կամ փորձառութենէն:

## Փոխան Խմբագրականի

Պարոյր Աղպաշեան, Պէյրուզ, 16 Մայիս 2011

### Սփիւռքի Հետ Վերաբերուելու Նրբութիւնն Ու Լրջութիւնը

Իրաւացի՞ է, երբ կ'ըսուի թէ՛ Հայաստանը զօրաւոր է Սփիւռքով, իսկ Սփիւռքը՝ Հայաստանով:

Ոմանք՝ հաւատքով, համոզումով, վճռականութեամբ կամ լաւատեսութեամբ, «այո» կը պատասխանեն, ուրիշներ՝ թերահաւատ, կասկածամիտ, վերապահ կամ յոռետես, անշուշտ, իւրաքանչիւրը մեկնելով իր տրամաբանութենէն կամ փորձառութենէն:

Կասկած չկայ (թերեւս պէտք չէ՞ ըլլայ), որ վերոյիշեալ բանաձեւումը, ըստ ամենայնի, կը ծառայէ համայն հայ ժողովուրդին, ի Հայաստան թէ Սփիւռք, սակայն, հարցերուն - հարցը կը դառնայ, երբ զայն կը կշռադատենք, կը խորաչափենք ու կը քննարկենք իր ամբողջականութեամբ:

Այլ խօսքով, եթէ Հայաստանը, իրօք, զօրաւոր է Սփիւռքով, իսկ Սփիւռքը՝ Հայաստանով, ատիկա ո՞րքանով իրականութիւն է, ո՞րքանով համադրուած, ո՞րքանով ներդաշնակուած եւ ո՞րքանով հունաւորուած:

«Սուզուելու» համար այս թղթածրարին մէջ կամ լայնօրէն բանալու անոր էջերը, պէտք է մենք զմեզ հեռու պահենք զգացականութենէ, դիւրագրգռութենէ, հեշտասիրութենէ, մանաւանդ՝ «շափուկ»ացած հայրենասիրութենէ:

Շատեր կը կարծեն, թէ՛ երբ Հայաստան, հայրենիք կամ հայ ժողովուրդը կ'ըսուի, ուրեմն, հոն գերակշռողը պէտք է ըլլայ միայն զգացական-հայրենասիրութիւնը, մոռնալով որ *չոր* ու *կարծր* իրականութիւններ կան, որոնց կողքէն կարելի չէ անցնիլ ինքնասիրահարուածութեան եւ ինքնասիրութեան բովերով:

Եթէ մենք Սփիւռքը կը քննադատենք, անոր թերի եւ յոռի բարքերով - օտարացում, քաղքենիացում, կապկումներ, անկումներ - եւ առ հասարակ մեր արմատներէն հեռացումներով ու *սրտցաւորէն* մատնանշելով զանոնք, ապա, ինչո՞ւ նոյնը պիտի չընենք հայրենի ներկայ իրականութեան մասին, ուր ավագանիական ու վերնախաւային փտածութիւնները աղէտներու դուռ կը բանան, ողբերգութիւններ կը ստեղծեն, արտագաղթի հոսանքներ կը պատճառեն:

Սփիւռքը թաղած կ'ըլլանք այս ոճով, հակահայաստանցի կ'ըլլանք այս հպումներով: Քա՛ւ լիցի: Ոչ մէկը, ոչ միւսը, այլ «մատը վերքին վրայ դնելու» կառուցողական փորձ մը կատարած կ'ըլլանք, երբ կը տեսնենք Սփիւռքի մէջ *տատանելի*, նոյնիսկ *նահանջելի*, մինչ Հայաստանի մէջ *խոցելի*, նոյնիսկ *պախարակելի* երեւոյթներ:

Սփիւռքը՝ իր զանազան բաղադրամասերով ու շեշտաւորումներով, հսկայական ու լայնածաւալ շտեմարան մըն է, «լաւայ»ի ուժգնութեամբ, որուն բովանդակութեան, տարողութեան ու համապարփակութեան ծանօթանալու համար, *գերբնական ուժ պէտք է* - մասնագիտական եւ որակական առումներով:

Բազմիցս ըսինք ու գրեցինք, թէ Սփիւռքը ճանչնալը չի կրնար ըլլալ միայն բարի կամեցողութեամբ, բարի տրամադրութեամբ, բարի հասկացողութեամբ կամ բարի մտածողութեամբ, ոչ ալ հպանցիկ-սլացիկ, անցողակի-սողոսկակի կամ հպանցիկ-թռուցիկ ճանապարհներով:

Այո՛, Սփիւռքը ո՛չ միայն բարդ *խրթնակառոյց* մըն է, այլեւ՝ *փշախառն*, որուն հետ կարելի չէ վերաբերուիլ քմահաճութեամբ, պատահականութեամբ ու մանաւանդ անլրջութեամբ: Խօսքը, հասկնալի է, կը վերաբերի Հայաստանէն Սփիւռք մօտեցումներուն ու վերաբերմունքներուն, դիտարկումներուն ու դատարկումներուն, որոնք երբեք պէտք չէ ըլլան *անուսուժնասիրուած* եւ *անսերտուած* հիմունքներով, երբ անոնք կը վերաբերին հայրենիք-սփիւռք յարաբերութիւններուն, ներգաղութային ամնչութիւններուն, կազմակերպութիւններու դերաբաշխումներուն ու համայնքային դրուածքներուն:

Եթէ կը կարծուի թէ ասոնք չեն պատահիր (ու չեն պատահած), անճշդութիւններ կամ չափազանցութիւններ են, ո՛չ, կան բազմաթիւ տուեալներ եւ օրինակներ, որոնցմէ իրագել են *պատկան* կողմեր, սակայն, մտահոգիչը այն է, որ՝ գիտակցաբար թէ այլապէս, կը շարունակուի Սփիւռքին հետ վերաբերուիլ «անհաշտ» գործելաճով մը:

«Անհաշտ» ուրբիւնը պէտք չէ մեկնաբանել իր ժխտական կամ բացասական իմաստներով, այլ, միգուցէ, անգիտութեամբ, անտեղեկութեամբ, շուտիկութեամբ, բայց նման մօտեցումներ ո՞րքանով այլեւս կրնան ըլլալ արդարանալի կամ ընդունելի, երբ որ գործ ունինք *պետականութեան* հետ:

Հայրենի կարգ մը պատասխանատուներու հեւքը, թափը, կորովը, օրինակի համար, անտարակո՛յս, խիստ գովելի են, սակայն, Սփիւռքը ճանչնալու, անոր հետ յարաբերելու ու առնչուելու կամ զայն կարեւորելու եւ անկէ օգտուելու համար, կան բազմակոյտ մարտահրաւերներ ու պահանջարկներ, որոնց «լուծում» կամ «ելք» գտնելու համար, անհրաժեշտ են փոխադարձ համախոհութեան ու համագործակցութեան եզրեր, առանց դառնալու... պայթուցիկ ու ցուցադրիկ:

Այս ընդգծումը, գէթ տուեալ պարագային, ոչ թէ յիշեցումի կարգով, այլ՝ պարզապէս ցոյց տալու ու հաստատելու համար Սփիւռք հասկացողութեան իրերամերժութիւնը, հակադրութիւնը ու բեւեռայնութիւնը - գաղութային, համայնքային, կուսակցական, միութենական եւ տակաւին բազմաթիւ այլ մարզերէ ներս, որոնք, երբեմն, իւրաքանչիւր «ցնցում» է ետք, կ'առաջացնեն փոթորիկներ:

Այս բոլորէն բազմաթիւ նմուշներ կան ու պիտի շարունակեն ըլլալ, այնքան ատեն որ Սփիւռքի նկատմամբ, մեղմ ըսած, կրնայ «հարեւանցի» վերաբերմունք ցուցաբերուիլ կամ մատուցուիլ:

Պէտք է մտածել, *լա՛ւ մտածել*, նախքան գործի անցնիլը կամ որոշումներ կայացնելը, թէ Սփիւռքը ի՞նչ կը ներկայացնէ, եւ կամ որեւէ հայրենական «տնօրինում», ուրկէ ալ գայ ան, ի՞նչ (դրական կամ ժխտական) հակազդեցութիւններու տեղի կրնայ տալ:

Պէտք չէ՛ մոռնալ, Սփիւռքը, ունենալով հանդերձ իր «ներքին հարցերը», ճիշդ չէ անոր հետ վերաբերուիլ, երբեմն, «պատահական քար»եր նետելով ու զայն ալեկոծելով, ինչպէս պատահեցաւ, վերջերս, «պալատ»ականութիւններու... թռուցիկութեամբ, որուն «ոչ առջեւը, ոչ ալ ետեւը» յայտնի եղաւ... տակաւին:

«Ինչո՞ւ» հարցնելն իսկ անհեթեթութիւն է, որովհետեւ Սփիւռքը ինքնին «անլոյծ խճանկար» մըն է, լի որոգայթներով ու դարաններով, որոնց չէզոքութեան հարցով, սփիւռքահայութիւնը կը մնայ անզօր, իսկ Հայաստանի պաշտօնական իշխանութիւնները պէտք է հասկնան այս «»դրուածք»ը ու համապատասխան ձեւով վերաբերուին անոր հետ, առանց «զգայացունց» ըլլալու կամ «զգայացունց»ութիւն առաջացնելու, թէկուզ բարի կամ շինիչ նպատակներով:



